# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Վեգ կաhույք ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/232 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Դահլիճի աթոռներ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի դահլիճի համար անհրաժեշտ է ձեռք բերել աթոռներ: Հիմնական չափսեր. Նստատեղերի կենտրոնների միջև հեռավորությունը առնվազն 580 մմ, բազկաթոռի լայնությունը առնվազն 80 մմ, նստատեղի ներքին լայնությունը առնվազն 500 մմ, նստատեղի բարձրությունը առնվազն 440 մմ, մեջքի բարձրությունը առնվազն 1000 մմ: Բոլոր չափսերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 1. Նստատեղի և մեջքի սպունգ Օգտագործվում է բարձր խտության սառը ձևավորման PU (պոլիուրեթանային) սպունգ, որն ունի բարձր էլաստիկություն, հարմարավետ է և դիմացկուն: Նստատեղի սպունգի խտությունը՝ առնվազն 40 կգ/մ3, մեջքի սպունգի խտությունը առնվազն 40 կգ/մ3: Ունի ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ, հարվածամեղմիչ, հակաստատիկ հատկություններ, ինչպես նաև լավ օդաթափանցելիություն: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 2. Նստատեղի և մեջքի ներքին տախտակ Պատրաստված է բարձրորակ նրբատախտակից (ֆաներա), որը կաղապարի միջոցով ճկվում և ձևավորվում է աղեղնաձև տեսքով: Հաստությունը առնվազն 10 մմ: Համապատասխանում է էրգոնոմիկ պահանջներին, ունի բարձր կրողունակություն, հարվածադիմացկուն է և չի դեֆորմացվում: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 3. Նստատեղի և մեջքի արտաքին պատյան Պատրաստված է բարձրորակ PP (պոլիպրոպիլեն) բազմաբաղադրիչ կոմպոզիտային նյութից՝ կաղապարային ներարկման տեխնոլոգիայով: Ունի բարձր կրողունակություն, հարվածադիմացկուն է, դիմացկուն է ծերացման և գունաթափման նկատմամբ: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 4. Բազկաթոռի վերին մաս Պատրաստված է բարձրորակ կաղնու փայտից, մշակված է երեք շերտ ներկման |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիայով, լաքապատ մակերեսով: 5.Կողային վահանակ Պատրաստված է բարձր խտության MDF սալից՝ ձևավորված կաղապարային ճնշմամբ: Արտաքին մասը պատված է սպունգով և գործվածքով, ապահովում է փափուկ և հարմարավետ հպում: Նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 6.Գրելու սեղանակ (folding writing tablet) Առաջին մասում տեղադրված մելամինային գրելու սեղանակ՝ առնվազն 265*235*15մմ: Շրջանակը պատված է պլաստիկ ներարկման եզրապատմամբ /Նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ/: Միացման հենակը պատրաստված է առնվազն 14 մմ տրամագծով ամբողջական մետաղական ձողով: Ծալվելու ժամանակ աղմուկ չի առաջանում: Գրելու սեղանակը պահվում է բազկաթոռի ներսում, ինչը ապահովում է գեղեցիկ տեսք ու հարմար օգտագործում: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 7.Հենակոտեր (ոտքեր) Բազկաթոռի շրջանակը պատրաստված է առնվազն 1,8 մմ հաստությամբ բարձրորակ պողպատե թերթից: Ոտքի խողովակը՝ առնվազն 60x40x1,2մմ, բարձրորակ ուղղաբկյուն խողովակ՝ ձևավորված $CO_2$ եռակցման միջոցով: Մետաղական մասերը անցնում են հետևյալ մշակման փուլերը՝ հղկում, ժանգազերծում, ֆոսֆոտացում, էլեկտրաստատիկ փոշեներկում և բարձր ջերմաստիճանով վառարանային ամրացում: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 8. Գործվածք Նստատեղը, մեջքը և կողային վահանակները պատված են դահլիճային նստարանների համար նախատեսված հատուկ գործվածքով, որը դիմացկուն է մաշվածության և օքսիդացման նկատմամբ: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 9. Նստարանի կառուցվածք Օգտագործվում է ուժեղացված միացման կառուցվածք, որը արտաքին ուժի ազդեցության դեպքում նստատեղի և մեջքի բախման ժամանակ ապահովում է ավելի բարձր դիմացկունություն, ամրություն և հարմարավետություն: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 10.Ավտոմատ վերադարձի համակարգ Նստատեղի ներսում տեղադրված է զսպանակային վերադարձի մեխանիզմ, որի շնորհիվ նստատեղը ինքնաբար և ճշգրիտ վերադառնում է սկզբնական դիրքին: Վերադարձը կատարվում է սահուն, առանց աղմուկի և խափանումների: Համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Հին աթոռների ապամոնտաժումը և տեղափոխումը իրականացվելու է Մատակարարի կողմից և իր միջոցներով, ինչպես նաև նոր աթոռների մատակարարումը և տեղադրումը կատարվելու է Մատակարարի կողմից և իր միջոցներով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Վեգ կահույք ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/232 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |